ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 88-Ա

<< 30>> նոյեմբերի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 124-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի<<Սառնաղբյուրի մանկապարտեզ>>, Լանջիկի <<Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ>> և Մարալիկ քաղաքի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների 2023 թվականի նոյեմբերի 14-ի համատեղ զեկուցագիրը՝ սննդամթերքի շուկայում վերջին տարիներին տեղի ունեցած գնաճի հետևանքով մանկապարտեզ հաճախող երեխաների համար սահմանված անհրաժեշտ սննդի նորմատիվային պահանջարկի ապահովման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ոչ առեվտրային կազմակերպություններ հաճախող մեկ սանի հաշվով սննդի միջին օրական ծախսը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 29-ի թիվ 56 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 124-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 1-ին կետի <<220>> թիվը փոխարինել <<270>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ - 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	_____	_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	_____	_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ	_____	_____	_____
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	_____	_____	_____
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԵՆՈՔՅԱՆ	_____	_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<30>> նոյեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ